

**ՀՀ ֆինանսների նախարարություն**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/4**

**24 հունիսի 2014 թ.**

Քննարկվեց «Սիստրոտեխ» ՍՊԸ 27.05.2014 թ-ի դիմում-գանգատը լրացուցիչ հաշվարկված հարկային պարտավորությունները վերահաշվարկելու վերաբերյալ:

**«Սիստրոտեխ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

Ստացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ 2014 թ-ի ապրիլի 23-ի թիվ 247 որոշումը, ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին, ինչպես նաև ծանուցագիր նույն առիթով վարչական գործի քննության մասին: Նկատի ունենալով, որ կազմակերպությունը միշտ և առանց ուշացումների կատարել է բոլոր հարկային պարտավորությունները, այդ որոշումն անակնկալի բերեց:

Արաբկիրի հարկային տեսչության աշխատակիցների օգնությամբ պարզվել է, որ այդ պարտավորություններն առաջացել են տույժերի և տուգանքների ձեռքով՝ 2013 թ-ի սեպտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվետվությունը ժամանակին չներկայացնելու պատճառով, համենայն դեպս այդպես է երևում հարկային տեսչության համակարգչային ծրագրում: Այնինչ 2013 թ-ի սեպտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվետվությունը ներկայացվել և ընդունվել է ժամանակին, որի մասին առկա է համակարգչից ստացված ծանուցում:

Էլեկտրոնային համակարգում այդ հաշվետվության կարգավիճակն առ այսօր ցուցադրված է որպես «Վավեր»: Էլեկտրոնային եղանակով «Սիստրոտեխ» ՍՊԸ-ն չի ստացել որևէ ծանուցում հաշվետվության ընդունված չլինելու վերաբերյալ:

Հայտնվում է նաև, որ 2013 թ-ի հոկտեմբերից մինչև 2014 թ-ի ապրիլ ամիսն չի կիրառվել վարչական տույժ 2013 թ-ի սեպտեմբեր ամսվա հաշվետվությունը ժամանակին չներկայացնելու կապակցությամբ:

Հարկային տեսչության աշխատակիցների խնդրանքով 2014 թ-ի փետրվարին ուղարկվել է 2013 թ-ի սեպտեմբեր ամսվա ճշտված հաշվետվություն, փորձելով հնարավորինս ուղղել ստեղծված իրավիճակը, որին և հաջորդել է վերոգրյալ որոշումը:

Փաստացի 2013 թ-ի սեպտեմբեր ամսվա հաշվետվությունը հարկային մարմնի կողմից չընդունված համարվելու պատճառով հաշվարկվել են տույժեր, որոնք և գոյացրել են ժամանակին չվճարված հարկային պարտավորություններ: Նույն պատճառով ս.թ. մայիսի 7-ին Արաբկիրի ՀՏ իրավաբանական բաժնի կողմից արձանագրություն է կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ «ՎԻՎ» ՀՀ օրենսգրքի 170/3 հոդվածի հատկանիշներով:

Ելնելով վերոգրյալից՝ «Սիստրոտեխ» ՍՊԸ-ն խնդրում է վերահաշվարկել կազմակերպության հարկային պարտավորությունները, ինչպես նաև վերանայել վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Սիստրոտեխ» ՍՊԸ կողմից 30.09.2013 թ-ին էլեկտրոնային եղանակով ներկայացվել է 2013 թ-ի սեպտեմբեր ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկը, որի ընդունման վերաբերյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգից ստացել է ծանուցում: Ընդ որում հարկ է նշել, որ ծանուցման համաձայն ամփոփ հաշվարկը ներկայացվել է ժամը 20:08-ին, այսինքն՝ աշխատանքային ժամի ավարտից հետո:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը: Սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի հիմնարկում կամ կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ կազմակերպությունում կամ հիմնարկում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթները, որի համաձայն վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են, ինչպես նաև հաշվի առնելով, որ «Սիստրոտեխ» ՍՊԸ կողմից 2013 թ-ի սեպտեմբեր ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկը էլեկտրոնային եղանակով ներկայացվել է 30.09.2013 թ-ին ժամը 20:08-ին, աշխատանքային ժամի ավարտից հետո, հետևապես այն ըստ էության կարող դիտվել ներկայացված 01.10.2013 թ-ին:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պահանջին, որը վերաբերվում է վարչական իրավախախտման վերաբերյալ կայացված որոշումը վերանայելուն, ապա նշվեց, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման հետ համաձայն չլինելու դեպքում այն սահմանված կարգով կարող է գանգատարկվել:

Քննարկվող դեպքում սույն գործով վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշում դեռևս կայացված չէ, հետևապես վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը վերանայելու պահանջը չի կարող քննության առնվել է:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Սիստրոտեխ» ՍՊԸ 27.05.2014 թ-ի դիմում-գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ